



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 54886 գործարքներ, որոնց քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 19.4%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 4.8%-ով:

2005թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 20053 օտարման գործարքների 88.9%-ը կազմել են առուվաճառքները, 10.4%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 39.9%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. առաջին կիսամյակում, 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.2%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 7.7%-ով: 2005թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 6564 առուվաճառքի գործարքների 67.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.1%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 13.0%-ով:

2005թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2005թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.
Կենտրոն	173000.0-433900.0	244672.3	265007.7	246631.6
Արաբկիր	122900.0-290750.0	190108.9	216962.2	196100.5
Քանաքեռ-Զեյթուն	63900.0-223650.0	117602.6	132555.7	119727.8
Նոր-Նորք	56500.0-178900.0	97548.9	120633.9	104484.7
Ավան	59000.0-156550.0	92645.4	114111.2	100060.4
Էրեբունի	59000.0-178900.0	95947.5	106616.9	96165.9
Շենգավիթ	59000.0-201300.0	105394.4	129167.0	114466.7
Դավթաշեն	63900.0-201300.0	117723.4	134100.3	122943.4
Աջափնյակ	59000.0-201300.0	105533.7	126364.9	112481.4
Մալաթիա-Սեբաստիա	59000.0-201300.0	104400.8	123460.6	111607.1
Նուբարաշեն	36900.0-80500.0	40238.4	56319.8	44303.7
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	36900.0-433900.0	119256.0	138663.7	124452.1

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. առաջին կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 11.4%, իսկ տարեկան աճը՝ 16.3%:

2005թ. առաջին կիսամյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. առաջին կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2343 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. առաջին և 2004թ. երկրորդ կիսամյակների համեմատ նվազել է միևնույն՝ 16.3%-ով:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			առաջին կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2005թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.
Արագածոտն	<i>Աշտարակ</i>	19700.0-66800.0	35252.0	40321.6	35131.7
	<i>Սյարան</i>	9850.0-26700.0	16627.6	19407.4	19130.6
	<i>Թային</i>	9850.0-28950.0	15649.2	17573.9	16266.0
Արարատ	<i>Արտաշատ</i>	19700.0-42300.0	30960.6	32464.5	29512.5
	<i>Մասիս</i>	19700.0-44500.0	31719.0	35536.6	31902.2
	<i>Վեդի</i>	14750.0-28950.0	19843.3	20453.6	21712.7
	<i>Արարատ</i>	14750.0-31150.0	19098.9	23043.8	21087.5
Արմավիր	<i>Վաղարշապատ</i>	24600.0-80100.0	48128.1	62108.5	52636.2
	<i>Արմավիր</i>	19700.0-48950.0	27049.7	37243.4	32788.7
	<i>Մեծամոր</i>	9850.0-28950.0	17615.9	18674.8	16632.4
Գեղարքունիք	<i>Սևան</i>	9850.0-33400.0	17790.2	20098.9	17973.0
	<i>Գավառ</i>	9850.0-28950	17798.6	17290.4	17140.7
	<i>Մարտունի</i>	9850.0-31150.0	17430.6	19425.7	18416.2
	<i>Վարդենիս</i>	4900.0-20050.0	9675.6	9705.1	8957.2
	<i>Ճամբարակ</i>	6400.0-20050.0	9926.4	8859.8	9126.1
Լոռի	<i>Վանաձոր</i>	14750.0-42300.0	34693.6	33794.3	32532.7
	<i>Ստեփանավան</i>	9850.0-28950.0	18955.3	19244.2	18674.5
	<i>Սյիտակ</i>	14750.0-35600	16452.0	22706.0	21178.5
	<i>Ալավերդի</i>	7400.0-22250.0	14364.7	13803.6	13425.3
	<i>Տաշիր</i>	7400.0-26700.0	11895.2	15165.3	12951.5
	<i>Թումանյան</i>	4450.0-8900.0	4929.1	5080.6	4975.6
	<i>Շամլուղ</i>	2450.0-8250.0	2790.4	2779.7	2813.9
	<i>Ախթալա</i>	7400.0-15800.0	10315.3	10356.8	10314.1
Վոտայք	<i>Արույան</i>	22150.0-80100.0	48103.4	60967.3	52811.5
	<i>Նոր Հաճն</i>	24600.0-53400.0	31173.7	41949.6	37018.8
	<i>Բյուրեղավան</i>	14750.0-44500.0	20348.2	27986.8	24206.1
	<i>Եղվարդ</i>	17200.0-44500.0	23806.1	33698.4	26726.8
	<i>Հրազդան</i>	14750.0-44500.0	18870.4	25662.7	22467.8
	<i>Ծաղկաձոր</i>	19700.0-66800.0	42768.1	47993.4	45164.9
	<i>Չարենցավան</i>	14750.0-37850.0	18787.7	25133.1	21464.7
Շիրակ	<i>Գյումրի</i>	19700.0-53400.0	40285.3	37810.3	38773.5
	<i>Արթիկ</i>	9850.0-26700.0	15125.3	17531.5	15997.0
	<i>Մարալիկ</i>	8850.0-22250.0	14103.0	14650.5	14453.7
Սյունիք	<i>Գորիս</i>	12300.0-44500.0	17854.5	26884.5	19527.9
	<i>Կապան</i>	9850.0-35600.0	17478.8	21435.4	17391.8
	<i>Սիսիան</i>	9850.0-35600.0	16825.3	21069.5	18418.6
	<i>Մեղրի</i>	8850.0-35600.0	14113.5	15787.5	13059.4
	<i>Ագարակ</i>	8850.0-35600.0	14020.4	13789.3	12825.1
	<i>Քաջարան</i>	6400.0-17800.0	10454.8	10862.0	10127.8
	<i>Դաստակերտ</i>	4900.0-11150.0	6632.0	6366.3	6637.2
Վայոց Ձոր	<i>Վայք</i>	14750.0-35600.0	19724.5	21680.4	20566.2
	<i>Եղեգնաձոր</i>	19700.0-44500.0	26245.6	31357.0	26763.6

	<i>Ջերմուկ</i>	19700.0-53400.0	22962.3	34484.2	28357.0
Տավուշ	<i>Ղիլիզան</i>	14750.0-35600.0	20471.3	25610.4	22455.7
	<i>Իջևան</i>	19700.0-44500.0	23599.3	30721.9	27768.9
	<i>Բերդ</i>	12300.0-31150.0	16446.9	20815.6	17340.6
	<i>Նոյեմբերյան</i>	7400.0-20050.0	15079.7	12820.2	14097.5

2005թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 11.0%, իսկ տարեկան աճը՝ 17.4%:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2260 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 598, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1662: 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 23.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 3.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ նվազել 29.6%-ով: 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 16.0%-ով, ընդ որում Երևանում՝ 9.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 18.0%-ով:

2005թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ.առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2005թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.
Կենտրոն	110600.0-898000.0	252695.7	279200.3	248497.5
Արաբկիր	100800.0-449000.0	193425.7	221686.0	200129.4
Քանաքեռ-Զեյթուն	68800.0-269400.0	118775.9	134589.4	120325.3
Նորք-Մարաշ	59000.0-449000.0	182138.1	169085.3	174775.6
Ավան	61500.0-359200.0	94196.5	116000.5	100976.4
Էրեբունի	63900.0-224500.0	97497.4	108281.8	97644.2
Շենգավիթ	59000.0-202050.0	106147.3	131018.4	115307.2
Դավթաշեն	68800.0-404100.0	118548.5	137310.3	123857.1
Աջափնյակ	61500.0-269400.0	106580.9	128786.1	113493.9
Մալաթիա-Սեբաստիա	61500.0-404100.0	105492.9	126012.7	112667.5
Նուբարաշեն	32000.0-89800.0	42092.8	58100.5	44958.9
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	32000.0-898000.0	128872.0	146370.1	132057.5

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2005թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 10.8%, իսկ տարեկան աճը՝ 13.6%:

2005թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. առաջին կիսամյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			առաջին կիսամյակ 2004թ.	առաջին կիսամյակ 2005թ.	երկրորդ կիսամյակ 2004թ.
Արագածոտն	<i>Աշտարակ</i>	29500.0-80100.0	46581.1	43951.3	44091.0
	<i>Այաթան</i>	12300.0-26700.0	21705.8	20228.0	19955.5
	<i>Թային</i>	9800.0-28900.0	16592.4	18546.1	17566.9
Արարատ	<i>Արտաշատ</i>	24600.0-40100.0	34582.0	33241.3	31654.3
	<i>Մասիս</i>	24600.0-44500.0	35074.0	36348.3	32764.3
	<i>Վեդի</i>	12300.0-31200.0	21303.6	23112.6	24636.4
	<i>Արարատ</i>	9800.0-35600.0	21188.6	24161.8	22496.6
Արմավիր	<i>Վաղարշապատ</i>	39300.0-80100.0	50286.4	62942.6	53606.5
	<i>Արմավիր</i>	17200.0-44500.0	29643.2	38028.2	33389.6
Գեղարքունիք	<i>Մեան</i>	9800.0-28900.0	20319.7	21671.7	20406.6
	<i>Գավառ</i>	9800.0-26700.0	22273.5	19213.4	20306.4
	<i>Մարտունի</i>	9800.0-26700.0	19252.3	21094.4	20185.6
	<i>Վարդենիս</i>	7400.0-22300.0	11890.4	11421.3	10964.6
	<i>Ճամբարակ</i>	7400.0-22300.0	11163.7	10780.1	10854.8
Լոռի	<i>Վանաձոր</i>	24600.0-40100.0	38739.3	35121.8	35840.7
	<i>Ստեփանավան</i>	7400.0-35600.0	19267.8	25149.6	22588.6
	<i>Մայիտակ</i>	9800.0-31200.0	16801.6	23751.0	22651.3
	<i>Այվերդի</i>	7400.0-22300.0	14577.1	15135.6	14491.4
	<i>Տաշիր</i>	7400.0-24500.0	12181.0	16425.3	13813.8
	<i>Թումանյան</i>	4900.0-13400.0	5318.4	6179.7	5533.5
	<i>Շամլուղ</i>	2500.0-8900.0	3374.2	3953.7	3872.8
	<i>Ախթալա</i>	9800.0-17800.0	11050.3	11060.1	11057.3
Կոտայք	<i>Աբովյան</i>	34400.0-80100.0	51849.5	61777.7	53876.0
	<i>Նոր Հաճն</i>	19700.0-53400.0	31602.8	43238.1	37712.3
	<i>Բյուրեղավան</i>	12300.0-40100.0	21460.5	28744.4	24619.4
	<i>Եղվարդ</i>	19700.0-44500.0	26505.7	34531.0	27452.0
	<i>Հրազդան</i>	12300.0-35600.0	22551.7	27549.9	23262.8
	<i>Ծաղկաձոր</i>	34400.0-66800.0	47974.0	51327.7	48466.1
	<i>Չարենցավան</i>	12300.0-40100.0	19450.1	26528.3	21893.3
Շիրակ	<i>Գյումրի</i>	29500.0-53400.0	50983.8	43198.5	46700.6
	<i>Արթիկ</i>	9800.0-31200.0	16148.2	18439.0	16866.6
	<i>Մարալիկ</i>	7400.0-22300.0	14296.0	15355.1	15037.2
Սյունիք	<i>Գորիս</i>	9800.0-40100.0	18590.3	27620.0	20395.2
	<i>Կապան</i>	9800.0-35600.0	18065.3	22365.5	18255.3
	<i>Միսիան</i>	9800.0-31200.0	17271.5	21546.0	19064.0
	<i>Մեղրի</i>	7400.0-26700.0	15742.2	16794.1	14476.6
	<i>Ազարակ</i>	7400.0-22300.0	15293.8	14961.4	14376.6
	<i>Դաստակերտ</i>	4900.0-15600.0	7282.9	7615.3	7416.3
	<i>Վայք</i>	9800.0-26700.0	20654.6	22852.5	21227.2

Վայոց Ձոր	<i>Եղեգնաձոր</i>	17200.0-44500.0	27530.0	32160.4	27127.3
	<i>Ջերմուկ</i>	12300.0-40100.0	24227.3	24440.0	22545.7
Տավուշ	<i>Դիլիջան</i>	9800.0-40100.0	21973.4	29886.7	26139.9
	<i>Իջևան</i>	17200.0-40100.0	23924.2	31516.0	28396.7
	<i>Բերդ</i>	9800.0-37800.0	17276.6	21537.7	17636.4
	<i>Նոյեմբերյան</i>	9800.0-26700.0	17193.6	14384.5	15775.7

2005թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 9.2%, իսկ տարեկան աճը՝ 12.5%:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 9656.40 հա /այդ թվում 153.56 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 9259.90 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 9449.74 հա հողերի /այդ թվում 146.69 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 9082.24 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 26.56 հա արդյունաբերական օբյեկտների և 0.06 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: 2005թ առաջին կիսամյակում Երևանում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք:

Օտարված 199.64 հա /այդ թվում 3.16 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 175.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 7.02 հա /այդ թվում 3,71 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ, որից 1.93 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 6916.94 հա, որից 6890.64 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2005թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն հողի վարձակալության իրավունքի վաճառքի, ինչպես նաև արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերի առուվաճառքների գործարքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի				բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	94	10.06	42	81.03	0	0.00	399	38.27	93	17.18
Արագածոտն	64	265.50	7	0.84	1	0.02	294	159.05	191	19.92	2	0.01
Արարատ	390	499.23	97	10.13	29	1.23	584	230.25	333	30.27	2	0.06
Արմավիր	605	5703.50	1	0.02	69	0.92	573	1187.14	255	24.17	10	0.91
Գեղարքունիք	10	60.60	16	2.58	1	2.00	66	33.39	39	8.01	0	0.00

Լոռի	0	0.00	2	0.54	2	0.05	175	93.88	34	4.98	5	0.05
Կոտայք	101	121.06	42	3.41	3	0.90	571	345.83	635	66.55	3	0.54
Շիրակ	82	25.13	31	1.87	22	0.92	116	113.94	35	6.18	4	0.04
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	104	115.32	12	1.17	0	0.00
Վայոց Ձոր	102	53.88	0	0.00	12	0.21	43	38.95	14	1.69	0	0.00
Տավուշ	0	0.00	22	1.63	3	0.44	66	35.60	20	1.92	1	0.02
Ընդամենը	1354	6728.90	312	31.08	184	87.72	2592	2353.35	1967	203.13	120	18.81

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են 6555 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ առաջին կիսամյակում՝ 4800/, այդ թվում 3946-ը՝ գյուղատնտեսական նշանակության /2406/, 2584-ը՝ բնակավայրերի /2358/, 24-ը՝ արդյունաբերական օբյեկտների /33/ և 1-ը հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ /3 /:

2005թ. առաջին կիսամյակում հողերի առուվաճառքներից 1787 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով, /2004թ առաջին կիսամյակում՝ 945/, այդ թվում 91-ը՝ /42.41 հա/ Երևանում /56/, իսկ 1696-ը՝ /6761.13 հա/ մյուս մարզերում /889/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 1346 միավորը /6711.27 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ առաջին կիսամյակում՝ 258/, 292-ը՝ /28.41 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /634/, 136-ը՝ /40.19 հա/ հասարակական կառուցապատման /45/ և 13-ը՝ /23.67 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/ հողեր:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրված 3946 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 1346-ը իրականացվել են աճուրդների , 66-ը՝ դատարանի վճիռների և 8-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	62	249.50	23.1	1280.3	187.2	240	71.11	369.8	4622.0	1707.8
Ապարան						3	1.73	92.4	785.7	291.2
Թային						46	69.60	92.4	776.5	219.5
Ծաղկահովիտ						5	16.60	78.6	970.6	127.1
Արարատի մարզ										
Արտաշատ	249	238.33	9.2	13436.2	628.6	273	97.39	342.0	5546.4	1076.9
Մասիս	74	119.16	25.4	5192.8	411.4	139	50.55	184.9	4067.4	1104.7
Վեդի	67	141.74	71.6	2639.2	674.8	155	78.64	208.0	3327.8	716.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	191	319.14	11.6	17013.6	466.8	221	445.57	300.4	2149.2	660.9
Բաղրամյան	206	5105.71	16.2	501.5	101.7	125	611.80	92.4	693.3	360.5
Վաղարշապատ	208	278.65	18.5	8095.4	432.2	224	128.52	453.0	6470.8	1086.2
Գեղարքունիքի մարզ										

Գավառ						1	0.27	194.1	508.4	300.4
Ճամբարակ	10	60.60	120.2	924.4	288.9	9	4.41	46.2	231.1	108.6
Մարտունի						46	8.54	46.2	1848.8	399.8
Սևան								46.2	462.2	177.9
Վարդենիս						10	20.16	27.7	545.4	136.3
Լոռու մարզ										
Ալավերդի						23	8.41	166.4	2542.1	385.9
Գուգարք						37	11.38	231.1	2773.2	845.8
Սպիտակ						9	3.43	231.1	1525.3	469.1
Ստեփանավան						26	21.53	83.2	1848.8	238.0
Տաշիր						43	24.45	46.2	184.9	147.9
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	3.57	43.9	540.8	351.3	250	63.67	277.3	9244.0	2562.9
Եղվարդ	10	27.60	143.3	795.0	323.5	255	252.09	175.6	4622.0	1765.6
Հրազդան	88	89.89	80.9	1400.5	256.5	63	29.04	115.6	2773.2	543.1
Շիրակի մարզ										
Ախուրյան						56	59.02	254.2	1155.5	342.0
Ամասիա						5	10.76	37.0	242.7	85.5
Անի						20	18.41	110.9	369.8	166.4
Աշոցք						17	10.95	27.7	97.1	85.5
Արթիկ	76	23.50	159.5	1289.5	383.6	18	14.80	64.7	369.8	131.7
Սյունիքի մարզ										
Գորիս						9	7.40	92.4	739.5	268.1
Կապան						15	10.13	55.5	924.4	198.7
Մեղրի						11	1.69	184.9	1959.7	404.4
Սիսիան						63	94.43	41.6	693.3	157.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	89	29.11	60.1	351.3	288.9	22	15.60	120.2	1848.8	1153.2
Վայք	13	24.77	115.6	1070.0	258.8	21	23.35	55.5	1571.5	448.3
Տավուշի մարզ										
Բերդ						26	7.58	46.2	924.4	309.7
Իջևան						10	2.74	245.0	1848.8	718.7
Նոյեմբերյան						30	25.29	46.2	3854.7	355.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 1786 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 216-ը իրականացվել են աճուրդների, 2-ը՝ ուղղակի վաճառքների և 12-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										

Աշտարակ	7	8400.0	37.0	147.9	124.8	178	180813.0	115.6	3697.6	1781.8
Ապարան						4	3930.0	115.6	647.1	157.1
Թալին						9	14415.0	46.2	369.8	67.0
Ծաղկահովիտ								46.2	369.8	64.7
Արարատի մարզ										
Արտաշատ	59	62440.0	41.6	529.2	231.1	61	69408.0	138.7	2773.2	637.8
Մասիս	21	21310.0	238.0	270.4	254.2	226	187540.0	138.7	9244.0	758.0
Վեդի	17	17500.0	46.2	270.4	147.9	45	44489.0	115.6	1016.8	453.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						68	87959.0	138.7	2311.0	688.7
Բաղրամյան						3	3000.0	83.2	277.3	106.3
Վաղարշապատ	1	249.0	966.0	966.0	966.0	183	150250.0	138.7	4622.0	1035.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						12	12013.5	138.7	924.4	295.8
Ճամբարակ	15	24600.0	18.5	124.8	104.0	1	571.0	46.2	138.7	74.0
Մարտունի						17	19880.0	92.4	277.3	134.0
Սևան	1	1200.0	117.9	117.9	117.9	2	7140.0	92.4	924.4	120.2
Վարդենիս						7	40523.0	46.2	138.7	57.8
Լոռու մարզ										
Այվերդի						3	5270.0	69.3	277.3	97.1
Գուգարք						22	32140.0	69.3	2403.4	416.0
Սպիտակ						4	5380.0	64.7	416.0	92.4
Ստեփանավան	1	5000.0	37.0	37.0	37.0	1	904.0	46.2	277.3	74.0
Տաշիր						1	1130.0	46.2	138.7	62.4
Կոտայքի մարզ										
Աբովյան	18	14500.0	124.8	1455.9	1296.5	270	261120.0	138.7	4622.0	1247.9
Եղվարդ	2	2000.0	143.3	143.3	143.3	318	346225.0	138.7	4622.0	1377.4
Հրազդան	22	17589.0	4901.6	4934.0	4908.6	44	54933.0	138.7	3697.6	880.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	3201.9	175.6	1631.6	818.1	23	46727.7	115.6	1571.5	231.1
Ամասիա								46.2	138.7	62.4
Անի						2	1460.0	69.3	184.9	85.5
Աշոցք						1	5050.0	41.6	138.7	55.5
Արթիկ	20	15120.0	71.6	924.4	256.5	8	7874.0	69.3	416.0	108.6
Սյունիքի մարզ										
Գորիս						7	7864.0	69.3	554.6	191.8
Կապան						1	361.0	69.3	647.1	189.5
Մեղրի						1	630.0	69.3	416.0	106.3
Միսիան						2	2442.0	69.3	416.0	120.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						13	14531.0	69.3	1016.8	189.5
Վայք								78.6	647.1	104.0
Տավուշի մարզ										
Բերդ								46.2	647.1	78.6
Իջևան	22	16259.0	92.4	270.4	217.2	17	17035.0	69.3	1016.8	305.1
Նոյեմբերյան						2	1420.0	46.2	647.1	97.1

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 58 գործարքներ 29.93 հա մակերեսով, ընդ որում 41-ը՝ Արարատի /13.42 հա/, 1-ը՝ Արմավիրի /0.12 հա/, 5-ը՝ Շիրակի /4.90 հա/, 2-ը՝ Սյունիքի /0.52 հա/, 6-ը՝ Արագածոտնի /10.40 հա/, 1-ը՝ Կոտայքի /0.17 հա/ և 2-ը՝ Տավուշի /0.39 հա/ մարզերում:

2005թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5764 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների

24.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 29.4%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 23.4%-ով:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 285 բնակարանների, 111 անհատական բնակելի տների, 1412 հասարակական, 135 արտադրական նշանակության օբյեկտների, 3798 միավոր հողերի, 23 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2005թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 182 վարձակալության գործարքների քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 16.9%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 47.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալվել են 21156.80 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 90.05 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 20059.61 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 1129.89 հա նախկին պահուստային/, 672.65 հա բնակավայրերի, 130.92 հա արդյունաբերական օբյեկտների, 13.74 հա էներգետիկայի օբյեկտների, 14.00 հա անտառային, 32.48 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 0.74 հա տրանսպորտի օբյեկտների, 3.26 հա ջրային, 139.35 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Կոտայքի մարզում՝ 6616.57 հա, որից 6596.06 հա գյուղատնտեսական նշանակության: 2005թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 12611.33 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	848.80	331	1123.68
Արարատ	29	3345.03	120	981.20
Արմավիր	0	0.00	36	1003.17
Գեղարքունիք	64	772.20	178	1022.87
Լոռի	4	188.30	193	500.19
Կոտայք	62	5929.00	282	667.06
Շիրակ	8	729.00	402	1221.13
Սյունիք	3	299.00	141	717.85
Վայոց Ձոր	0	0.00	135	142.80
Տավուշ	25	500.00	22	68.31
Ընդամենը	201	12611.33	1840	7448.26

2005թ. առաջին կիսամյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4244 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 21.4%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 1.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /42.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.7%/, առանձնատների /14.7%/ և հողերի /16.8%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2054 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 19.9%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 3.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1946.14 հա /այդ թվում 23.53 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 1914.41 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1409.10 , որից 1408.86 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 94 և 48 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2004թ. առաջին կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 35.7% -ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ աճել 10.9%-ով: 2005թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 18.3%:

2005թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 9468 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 23.7%-ով, իսկ 2004թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 7.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /45.3%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն